Թաղման այն ձևերը, որ նկարագրում է Կիրակոս Գանձակեցին[26], XVIII դ. վաղուց մոռացության էին տրված անշուշտ նախ և առաջ մահմեդական կրոնի պահանջմամբ, բայց և ավելի նոր միջավայրի մեջ իրենց տնտեսական և հասարակական կացության հիմնավորապես կերպարանափոխության հետևանքով[27]։

XIX դարի սկզբներին ռուսական տիրապետությունը, ինչպես Անդրկովկասում, նույնպես և մասնավորապես Ղարաբաղի պրովինցիայի Զանգեզուր գավառի մահալներում գտավ թուրքական տարրը թե իր ֆիզիկական կազմվածքով և թե կենցաղային ձևերով արդեն չափազանց փոփոխված XIII դ. հետո։ Վեցդարյան համակցությամբ երկու էթնիկ շերտերը, էնդեմիկ՝ հայկականը և վերջնամուտ՝ թրքականը, իրար անչափ մոտեցած էին, որ որոշ դեպքերում նրանց իրարից տարբերելը դժվարին էր դարձած[28]։

ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ՈՐՊԵՍ ՂԱՐԱԲԱՂԻ ՊՐՈՎԻՆՑԻԱՅԻ ՄԻ ՄԱՍԸ

1822 թ. Մեհտի-Ղուլի-խանի Շուշուց փախչելուց հետո Ղարաբաղի խանությունը հայտարարվեց Ղարաբաղի պրովինցիա և ժառանգական խանին փոխարինեց ռուսական իշխանության կողմից նշանակված պաշտոնյան՝ կոմենդանտը։ Այդ կացությունը տևեց մինչև 1841 թ. սկիզբը, երբ սենատոր Հանի մշակած օրինագծի համաձայն Անդրկովկասում նոր վարչական բաշխում կատարվեց և դրա հետ միաժամանակ՝ ամբողջ վարչական, դատական, ֆինանսական ապարատի արմատական վերակառուցում[1]։ Այդ գրեթե երկու տասնամյակների ընթացքում Զանգեզուրում պահպանվեց մահալական վարչությունը, և մելիքները շարունակեցին պետական ֆունկցիաներ կատարել, սակայն փոխվեցին նրանց կառավարած տերիտորիաների սահմանները, և այդ ֆունկցիաների բնույթը, մանավանդ, երբ ռուս-պարսկական պատերազմի հետևանքով Թյուրքմենչայի դաշնագրությամբ սահմանը ետ քաշվեց մինչև Արաքս, Ողջի (Զավնդուր) գետի աջակողմյան հողերն էլ (Մեղրու շրջանը հետը) միացվեցին ռուսական կալվածքներին և Փիսիան-Զավնդուրի մահալների

---

[26] «Եւ յորժամ ոք մեռանէր 'ի նոցանէ կամ սպանանէին, է'ր զոր բազում աւուրս շրջեցուցանէին ընդ իւրեանս, քանզի մտեալ դիւ՝ խօսէր անդուստ բազում բարբաջմունս, և էր զոր այրէին. և զկէս թաղէին յերկրի խոր փոսիւք, և ընդ նմին դնէին զզէնն և զհանդերձ, և զոսկի և զարծաթ, որ ինչ բաժին իւր էր։ Եւ թէ 'ի մեծաց ոք լինէր, 'ի ծառայից և յաղախնեաց ևս դնէին ընդ նմա 'ի գերեզմանի, զի սպաս կալցի ասէին նմա. այլ և ձիս, զի ասէին անդ պատերազմ սաստիկ լինել, և զոր յիշատակ կամէին առնել մեռելոց, ճեղքէին զփոր ձիոյն, և քարշէին ընդ այն զամենայն միսն առանց ոսկեր, և ապա զփորոտին և զոսկերսն այրէին հրով, և կարէին զմորթ ձիոյն, իբրև թէ զամենայն մարմինն ունիցի։ Սրեալ փայտ մի մեծ, հարեալ ընդ որովայնն և հանեալ ընդ բերանն, այնպէս վերացուցանէին 'ի ծառ, կամ 'ի բարձրավանդակ տեղւոջ»։ (Գլ. 32, էջ 161)։

[27] Այս ձևերը, որոնք հատուկ են տոհմատիրական կարգերից բխող հայացքներին, պահպանվում էին մինչև վերջին ժամանակներս Սիբիրի թրքական ճյուղի ժողովուրդների մի քանի սովորությունների մեջ։

[28] Տեղական և նորամուտ ժողովրդական տարրերի փոխադարձ ազդեցությունը, որը մի չափազանց կարևոր խնդիր է Անդրկովկասյան կուլտուրայի ընթացքը հասկանալու համար, սպասում է իր հատուկ ուսումնասիրողին։

[1] Учреждение для управления Закавказским краем, утвержденное 10 апреля 1840 г. «Второе собрание законов», т. V, № 13368.